

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԻՆՏԵՐՆԵՏՈՎ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

Ծանուցումները հանրային ու մասնավոր իրավունքի սուբյեկտների ամենօրյա գործունեության ամենահաճախ հանդիպող գործընթացներից են: Ինչպես մասնավոր, այնպես էլ հանրային կյանքի տարբեր ոլորտներում անընդհատ առնչվում ենք տարբեր տեսակի ծանուցումների անհրաժեշտությանը, որոնք, կախված ոլորտի առանձնահատկություններից և օրենսդրական կարգավորումների բնույթից, կարող են իրականացվել տարբեր կերպ:

Ծանուցումը ոչ միայն տեղեկությունների փոխանցումն է, այլ նաև փաստաթղթերի շրջանառությունը, որը պարունակում է կողմերի համար նշանակություն ունեցող տեղեկատվություն: Այսինքն՝ ծանուցումները վերաբերում են բիզնես գործընթացներից մինչև իրավական կամ վարչական ընթացակարգերի:

Այսպես, հանրային իշխանության մարմինների կողմից ֆիզիկական կամ իրավաբանական անձանց ծանուցումները իրականացվում են վարչական վարույթի շրջանակներում, դատական գործընթացներում: Կարևոր պայման է, որպեսզի ծանուցումները իրականացվեն օրենսդրական պահանջներին համապատասխան: ՀՀ օրենսդրությամբ կարգավորված են թե՛ վարչական վարույթի շրջանակներում վարույթի մասնակիցներին ծանուցելու, թե՛ դատական գործընթացներում դատավարության մասնակիցներին ծանուցագրերի փոխանցման վերաբերյալ հարաբերությունները: Վարչական վարույթի հարուցման մասին ծանուցելը նպատակ է հետապնդում ապահովել վարույթին մասնակցող անձի՝ լաված լինելու իրավունքը, ինչը հնարավորություն է տալիս վերջինիս լիարժեք իրականացնելու իր իրավունքների պաշտպանությունը: Դատական ծանուցագրերի միջոցով դատավարության մասնակիցները ծանուցվում են դատական նիստի, առանձին դատավարական գործողությունների ժամանակի և վայրի մասին: Հարկ է նշել, որ կայացված որոշումների մասին պատշաճ ծանուցում ստանալու իրավունքը համարվում է դատարանի մատչելիության իրավունքի դրսևորումներից (տե՛ս Zavodnik v. Slovénie գործով Եվրոպական

դատարանի 21.08.2015 թվականի վճիռը, կետ 71): Օրենսդրությամբ նախատեսված դեպքերում ծանուցումները իրականացվում են պատվիրված նամակով, էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով և պաշտոնական կայքերում հրապարակման միջոցով:

Ավելին, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքը նախատեսում է ծանուցումների երկու եղանակ՝ անհատական ծանուցում և հրապարակային ծանուցում, որոնք իրարից տարբերվում են տեղեկատվության տրամադրման եղանակով: Անհատական ծանուցումը բնութագրվում է որպես անձին առձեռն, պաշտոնական էլեկտրոնային փոստով, փոստային կամ կապի այլ միջոցով տրամադրման ենթակա տեղեկատվություն, իսկ հրապարակային ծանուցումը՝ տեղեկատվություն պարունակող հայտարարություն:


Հաշվի առնելով ծանուցումների նշանակությունն ու կիրառելիությունը՝ դրանք վերջին ժամանակներում դարձան ժամանակակից թվային կյանքի անբաժանելի մասը: Բջջային հավելվածներից մինչև վեբ բրաուզերներ ռազմավարությամբ, ծանուցումները օգնում են օգտատերերին տեղեկացված լինել վերջին տեղեկությունների, առաջարկների և թարմացումների վերաբերյալ: Մեր օրերում քաղաքացիները և ընկերությունները աստիճանաբար անցում են կատարում հանրային իշխանության մարմինների հետ իրենց գրագրությունը և փաստաթղթաշրջանառությունը էլեկտրոնային եղանակով կազմակերպելուն՝ օգտվելով գործընթացների և ծառայությունների թվայնացումից: Միաժամանակ, հանրային իշխանության մարմինների և ֆիզիկական ու իրավաբանական անձանց հետ հարաբերություններում ծանուցումների էլեկտրոնային եղանակի տարածվածության բարձր մակարդակի հասնելու համար անհրաժեշտ է զարգացնել կարգավորող դաշտը և տեխնոլոգիական առաջարկը:

Հենց այդ նպատակին հասնելու համար Կառավարության 2021-2026 թվականների ծրագրի 2.3 կետով որպես նպատակ նախատեսվել է թվայնացումը՝ հաշվի առնելով, որ թվային արդիական միջավայրի ստեղծումը ռազմավարական նշանակություն ունի Հայաստանի համար: Բացի այդ, Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությամբ նախատեսված՝ «Էլեկտրոնային արդարադատություն» էլեկտրոնային համակարգի ներդրմանն ուղղված ռազմավարական նպատակի իրագործման համատեքստում Արդարադատության նախարարությունը անդրադարձ է կատարում նաև նախարարության համակարգման

ոլորտներին վերապահված հանրային գործառույթների և տվյալների բազաների թվայնացմանն ու արդիականացմանը:

Այսպես, ռազմավարական միջոցառումներից է «Արդիականացնել հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքը, ստեղծել անհատական և հրապարակային ծանուցումների միասնական համակարգ» միջոցառումը, որի նախատեսման անհրաժեշտությունը պայմանավորված էր Հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային (azdarar.am) կայքի տեխնիկական հնարավորություններով, ծանրաբեռնվածությամբ և այն նոր ծրագրային լուծումներով արդիականացնելու, ինչպես նաև անհատական ծանուցումների նոր համակարգ ներդնելու հրամայականով:

Չնայած «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքի ընդունմամբ և հետագայում իրականացված էական փոփոխություններով հնարավորություն ստեղծվեց ծանուցումների գործընթացը կազմակերպել ինտերնետի միջոցով ծանուցումների էլեկտրոնային փոստին ուղարկելու եղանակով, որն ավելի էժան է, արագ և արդյունավետ, այնուամենայնիվ, էլեկտրոնային եղանակով անհատական ծանուցման մեխանիզմների ներդրումը դեռևս որպես ծանուցման հիմնական միջոց չի ծառայում և գերակշռում են փոստային ծանուցումները, որոնք և՛ ավելի ժամանակատար են, և՛ ծախսատար: Այսպես, որպես օրինակ, ստորև աղյուսակով ներկայացվում է ծանուցման ձևերի ներկայումս գործող հարաբերակցությունը.



Անհատական ծանուցումների ներկայիս համակարգը, օրենսդրական կարգավորումներով հանդերձ, հնարավորություն չի ընձեռնում ապահովել համակարգի միջոցով իրականացվող ծանուցումների պատշաճ ծանուցում համարվելը, ինչի արդյունքում անձինք նախընտրում են ծանուցումներն իրականացնել թղթային եղանակով՝ հետագա խնդիրներից խուսափելու նպատակով:

Ինտերնետի հասանելիության ներկա պայմաններում անձը կարող է տեղեկացված լինել իրեն էլեկտրոնային եղանակով հասցեագրված ծանուցումների մասին՝ անկախ իր գտնվելու վայրից, հաշվառման կամ բնակության վայրի փոփոխությունից կամ արտասահմանում գտնվելու հանգամանքից: Սակայն, քանի որ գործող օրենսդրական կարգավորումների և պրակտիկայի պայմաններում էլեկտրոնային ծանուցումներին առաջնահերթություն տրված չէ, ապա ծանուցող կողմը հիմնականում ծանուցումներն իրականացնում է թղթային եղանակով՝ փոստի միջոցով: Ինչպես նշվեց, վերջին եղանակը շատ հաճախ արդյունավետ չէ՝ ոչ միայն իր ծախսատար կամ ժամանակատար լինելու պատճառով, այլ հաճախ խնդիրներ են առաջանում անձի հասցեի (բնակության վայրի) փոփոխման դեպքում:

Գործող օրենսդրությամբ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, ինչպես նաև նոտարները հրապարակային ծանուցումներ և հայտարարություններ տեղադրելու համար վճար չեն կատարում: Այս բացառությունը առաջացնում է մի շարք խնդիրներ: Կայքում հայտարարությունների անվճար տեղադրումը հանգեցնում է համակարգի ծանրաբեռնվածության՝ առանց ռեսուրսների հաշվարկման արդյունավետ մեխանիզմի: Նման իրավիճակում անհրաժեշտ է սահմանել միասնական մոտեցում բոլոր սուբյեկտների համար՝ ապահովելով ծանուցումների ծառայության արժեքի համարժեք փոխհատուցում:

Ուստի, ծանուցումների ոլորտում առկա խնդիրների կանոնակարգման և էլեկտրոնային ծանուցումների արդիականացման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջացել ծանուցումների համակարգի համար նախատեսել այնպիսի իրավական լուծումներ, որոնց դեպքում առաջնահերթություն կսահմանվի տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ ծանուցումների դեպքում:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը.

Նախագծով առաջարկվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող ծանուցումները ֆիզիկական, ինչպես նաև իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին իրականացնել բացառապես էլեկտրոնային եղանակով: Որպես էլեկտրոնային եղանակ նախագծով առաջարկվում է ֆիզիկական անձանց համար ծանուցումներ ստանալու միջոցը սահմանել ֆիզիկական

անձանց պաշտոնական էլեկտրոնային փոստը, որին տրվում է նոր ձևակերպում ««Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծում, իսկ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար Հարկային օրենսգրքով սահմանված հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի անձնական էջը:

Նախագծով իրավաբանական անձիք և անհատ ձեռնարկատերերը համարվելու են պատշաճ ծանուցված ծանուցումը Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի անձնական էջում տեղադրվելու օրվան հաջորդող երրորդ օրվանից: Եթե իրավաբանական անձին կամ անհատ ձեռնարկատիրոջը ուղարկված ծանուցումը տեղադրվելուց երեք օր հետո բացակայում է հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի անձնական էջ մուտք գործելու վերաբերյալ էլեկտրոնային հավաստումը, ապա ծանուցումն իրականացվում է հրապարակային ծանուցման միջոցով, որի դեպքում իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը համարվում է պատշաճ ծանուցված Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական կայքում տեղադրվելու օրվանից հետո՝ հինգերորդ օրը:

Նախագծով ֆիզիկական անձիք համարվում են պատշաճ ծանուցված պաշտոնական էլեկտրոնային փոստ մուտք գործելու օրվանից: Եթե ֆիզիկական անձին ուղարկված ծանուցումը պաշտոնական էլեկտրոնային փոստում տեղադրվելուց երեք օր հետո բացակայում է ֆիզիկական անձի կողմից պաշտոնական էլեկտրոնային փոստ մուտք գործելու վերաբերյալ էլեկտրոնային հավաստումը, ապա ծանուցումը «Փոստային կապի մասին» օրենքով սահմանված հիբրիդային առաքանու միջոցով պատվիրված նամակով ուղարկվում է անձի հաշվառման հասցեով: Փոստային պատվիրված նամակը ֆիզիկական անձին ուղարկելուց յոթ օր հետո, եթե բացակայում է նամակը հանձնված լինելը հաստատող փաստաթղթային կամ էլեկտրոնային հավաստումը, այդ թվում՝ երբ ֆիզիկական անձը հրաժարվում է փոստային պատվիրված նամակը ստանալուց, ապա ծանուցումն իրականացվում է հրապարակային ծանուցման միջոցով:

Եթե առկա է ֆիզիկական անձի կողմից տրված գրավոր համաձայնություն կամ պաշտոնական էլեկտրոնային փոստի միջոցով տրված համաձայնություն կամ «Բնակչության պետական ռեգիստրի մասին» օրենքով սահմանված՝ նույնականացման քարտի ու հանրային ծառայությունների համարանիշի հետ փոխկապակցված թվային հաղորդակցության միջոցում տրված համաձայնություն, որով հստակ հավաստվում է, որ անձը համաձայն է ծանուցումները ստանալ բացառապես իր պաշտոնական էլեկտրոնային փոստի միջոցով, ապա ֆիզիկական անձը համարվում է պատշաճ ծանուցված ծանուցումը պաշտոնական էլեկտրոնային փոստում տեղադրվելու օրվան հաջորդող երրորդ օրվանից:

Համաձայն Նախագծի՝ Անհատական և հրապարակային ծանուցումը տեղադրելը, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի անձնական էջ և պաշտոնական էլեկտրոնային փոստ մուտք գործելը և ծանուցումը կարդալը հավաստելու, ծանուցման հետ ցանկացած գործողություն կատարելու վերաբերյալ տեղեկությունները հաշվառելու (լոգավորման) և լոգերը պահպանելու կարգը սահմանում է Կառավարությունը:

Նախագծով սահմանվում է, որ ծանուցման վերաբերյալ անձանց կողմից տրամադրված էլեկտրոնային փոստին ուղարկվում է տեղեկացում:

Համաձայն Նախագծի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջև ծանուցումները իրականացվում են պաշտոնական էլեկտրոնային փոստի միջոցով, եթե այլ՝ էլեկտրոնային ծանուցման կարգ նախատեսված չէ օրենքով կամ այդ մարմինների միջև առկա չէ էլեկտրոնային հաղորդակցության այլ կարգ:

Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին հնարավորություն է տրվում իրականացնելու ծանուցում էլեկտրոնային եղանակով այլ իրավաբանական և ֆիզիկական անձանց ու անհատ ձեռնարկատերերին, եթե վերջիններս միացած են «Հանրային տեղեկությունների մասին» օրենքով սահմանված տվյալների փոխանակման շերտին:

Եթե առկա է ֆիզիկական անձի կողմից տրված գրավոր համաձայնություն կամ պաշտոնական էլեկտրոնային փոստի միջոցով տրված համաձայնություն կամ «Բնակչության պետական ռեգիստրի մասին» օրենքով սահմանված՝ նույնականացման քարտի ու հանրային ծառայությունների համարանիշի հետ փոխկապակցված թվային

հաղորդակցության միջոցում տրված համաձայնություն, որով հստակ հավաստվում է, որ անձը համաձայն է ծանուցումները ստանալ բացառապես իր պաշտոնական էլեկտրոնային փոստի միջոցով, ապա ֆիզիկական անձը համարվում է պատշաճ ծանուցված ծանուցումը պաշտոնական էլեկտրոնային փոստում տեղադրվելու օրվան հաջորդող երրորդ օրվանից՝ անկախ պաշտոնական էլեկտրոնային փոստ մուտք գործելու կամ ծանուցումը կարդալու մասին էլեկտրոնային հավաստման առկայությունից

Էլեկտրոնային ծանուցումների ներդրման համար հիմք է ծառայել նաև միջազգային փորձի ուսումնասիրությունը:

" Դանիա

Դանիայում գործում է «Հանրային ուղարկողների կողմից ուղարկվող թվային փոստի մասին» ակտը (Proclamation of the Act on Digital Post from Public Senders): Ակտի համաձայն՝ Ֆիզիկական և իրավաբանական անձանց կապը Թվային փոստին նշանակում է, որ հանրային ուղարկողներն իրավունք ունեն հաղորդակցվել թվային փոստով շահագրգիռ անձանց հետ, որը առաջացնում է իրավական հետևանքներ: Հաղորդակցություն նշանակում է ուղարկել փաստաթղթեր, ծանուցումներ և այլն, այդ թվում նաև որոշումներ:

Թվային փոստի հիմնադրման հետ կապված հարցերը կարգավորվում են ֆինանսների նախարարության կողմից: Համաձայն այդ ակտի, 15 տարեկանից բարձր բոլոր ֆիզիկական անձինք, որոնք ունեն մշտական բնակության կամ բնակության վայր Դանիայում, պարտավոր են միանալ Թվային Փոստին, բացառությամբ այն դեպքերի, որք տվյալ անձը ազատված է պարտադիր միացման պարտականությունից: Իրավաբանական անձինք, որոնք ունեն հաշվառման համար ևս պարտավոր են միանալ Թվային փոստին, եթե վերջիններս ազատված չեն դրանից:

Միացման պարտականությունից բացառություն հանդիսանում են այն հատուկ հանգամանքները, որոնք կարող են անձին զրկել թվային փոստով ծանուցում ստանալու հնարավորությունից: Որոշումը կայացվում է տեղական ինքնակառավարման մարմնի ավագանու կողմից: Որպես ազատման հիմք կարող են դիտարկվել մի շարք հանգամանքներ, օրինակ՝ եթե ընկերությունը չունի հասանելիություն 512 կիլոբիթ արագությամբ կապի, կամ ընկերության տնօրենը հաշմանդամ է կամ ազատագրկված, կամ եթե անձը ունի հաշմանդամություն:

Թվային փոստի միջոցով ուղարկված հաղորդագրությունները համարվում են՝

- ստացված այն պահին, երբ հաղորդագրությունը հասանելի է դառնում հասցեատիրոջը փոստային ծրագրի մեջ, այդ թվում՝ դիտման հավելվածում, և
- ուղարկված նշված ուղարկողի կողմից:

" Էստոնիա

Չնայած այն փաստին, որ Էստոնիայում ծանուցումների իրականացման վերաբերյալ առկա չէ միասնական իրավական ակտ, էլեկտրոնային ծանուցումների վերաբերյալ դրույթները հիշատակվում են առանձին իրավական ակտերով: Մասնավորապես, Էստոնիայի քաղաքացիական դատավարության, վարչական դատավարության, ինչպես նաև հարկային օրենսգրքերում առկա են էլեկտրոնային ծանուցումների վերաբերյալ կարգավորումներ:

Էստոնիայի քաղաքացիական դատավարության օրենսգրքի 311¹ հոդվածով սահմանված են ընթացակարգային փաստաթղթերի հանձնման էլեկտրոնային եղանակները, մասնավորապես, նշված հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ դատարանը կարող է դատավարական փաստաթղթերը էլեկտրոնային եղանակով ներկայացնել ծրագրված տեղեկատվական համակարգի միջոցով՝ փաստաթուղթը համակարգում հասանելի դարձնելու մասին ծանուցում ուղարկելով.

1) դատարանին ծանուցված էլեկտրոնային հասցեին և հեռախոսահամարին,

2) Էստոնիայի անհատ ձեռնարկատերերի կամ իրավաբանական անձանց վերաբերյալ ռեգիստրի տեղեկատվական համակարգում գրանցված էլեկտրոնային հասցեին և հեռախոսահամարին,

3) բնակչության ռեգիստրում մուտքագրված հասցեատիրոջ և նրա օրինական ներկայացուցչի էլեկտրոնային հասցեին և հեռախոսահամարին,

4) այլ պետական ռեգիստրի տվյալների բազայում հասցեատիրոջ և նրա օրինական ներկայացուցչի էլեկտրոնային փոստի հասցեին և հեռախոսահամարին, որտեղ դատարանը կարող է ինքնուրույն ստուգել տեղեկատվությունը էլեկտրոնային հարցումով,

5) Էստոնիայի նույնականացման քարտի առկայության դեպքում՝ personal-identification-code@eesti.ee էլ. հասցեին (տե՛ս Code of Civil Procedure, §311¹):

Էստոնիայի քաղաքացիական դատավարության օրենսգրքի համաձայն՝ փաստաթուղթը համարվում է հանձնված, երբ ստացողը բացում է այն տեղեկատվական համակարգում կամ

հաստատում է այն ստանալը տեղեկատվական համակարգում՝ առանց փաստաթուղթը բացելու, ինչպես նաև, եթե դա արվում է մեկ այլ անձի կողմից, ում ստացողը թույլ է տվել տեղեկատվական համակարգում փաստաթղթեր տեսնելու հնարավորությունը: Համակարգը ավտոմատ կերպով գրանցում է փաստաթղթի հանձնումը: Ընթացակարգային փաստաթղթերը փաստաբաններին, նոտարներին, հարկադիր կատարողներին, սնանկության կառավարիչներին և պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններին տրամադրվում են ծրագրված տեղեկատվական համակարգի միջոցով էլեկտրոնային եղանակով: Նշված սուբյեկտներին ընթացակարգային փաստաթղթերը և դրանց մասին ծանուցումները այլ եղանակով կարող են տրամադրվել միայն հարգելի պատճառաբանության առկայության դեպքում (տե՛ս նույն տեղում):

Էստոնիայում էլեկտրոնային ծանուցումները որոշակի սուբյեկտների համար և որոշակի հանգամանքների առկայության դեպքում պարտադիր են: Մասնավորապես, եթե հասցեատերը ունի **Էստոնիայի նույնականացման քարտ, ապա ընթացակարգային փաստաթղթերը հասանելի դարձնելու վերաբերյալ ծանուցումը ուղարկվում է հատուկ առանձնացված այն էլ.հասցեն, որին պետական և տեղական ինքնակառավարման մարմինները կարող են ուղարկել փաստաթղթեր և ծանուցումներ՝** կապված անձի կամ վերջինիս ընկերության հետ, որոնք բխում են տվյալ անձի կամ նրա ընկերության պարտավորություններից կամ իրավունքներից: Ընդ որում, հատուկ առանձնացված էլեկտրոնային փոստի հասցեներին ուղարկված ծանուցումները պահվում են Էստոնիայի տեղեկատվական պորտալում (Պետական պորտալ) և վերահասցեագրվում օգտագործողի ամենօրյա օգտագործվող էլ.փոստի հասցեին, իսկ այդ հասցեներին ուղարկված փաստաթղթերը անձի էլ. փոստի հասցեին չեն ուղարկվում, այլ հասանելի են դառնում Պետական պորտալում, մինչդեռ փաստաթղթերի ստացման վերաբերյալ ծանուցումն ուղարկվում է օգտագործողի ամենօրյա օգտագործվող էլ. փոստի հասցեին կամ հեռախոսահամարին (տե՛ս Terms of the official email service of eesti.ee):

Ավելին, Էստոնիայի հարկային օրենսգրքով նշվում է, որ հարկային մարմինը կարող է ընդունել ավտոմատացված ձևով վարչական որոշում և փաստաթուղթ առանց հարկային մարմնի պաշտոնատար անձի անմիջական միջամտության, ինչը ծանուցվում է էլեկտրոնային եղանակով՝ համաձայն օրենսգրքի 54-րդ հոդվածով սահմանված ընթացակարգի (տե՛ս, Taxation Act, §462): Մասնավորապես, Էստոնիայի հարկային օրենսգրքի 54-րդ հոդվածի 2-

րդ մասի համաձայն՝ փաստաթուղթը համապատասխան հարթակում հասանելի դարձնելու մասին ծանուցումն ուղարկվում է փաստաթղթի հասցեատիրոջը նրա էլեկտրոնային հասցեով կամ բջջային հեռախոսահամարին կարճ հաղորդագրությամբ:

Այսինքն, այն դեպքերում, երբ հարկային մարմինը, ըստ ոլորտի քաղաքականության պատասխանատու նախարարի որոշմամբ սահմանված ցանկի, պետք է ընդունի ավտոմատացված ձևով վարչական որոշում և փաստաթուղթ, այդ պարագայում յուրաքանչյուր դեպքում հասցեատերը դրա մասին ծանուցվում է օրենսգրքով սահմանված ձևով՝ էլեկտրոնային եղանակով կամ կարճ հաղորդագրությամբ:

" Ավստրիա

Ավստրիայում պետական գործառույթների թվայնացմանը վերաբերող հիմնական իրավական ակտը թվային կառավարության ակտն է (E-government act): Վերջինիս 1 ա կետի 3 ենթակետի համաձայն՝ եթե այլ բան նախատեսված չէ դաշնային օրենքով, ի հավելումն էլեկտրոնային հաղորդակցության տարբերակի, պետք է տրամադրվի առնվազն մեկ այլ կապի ձև համապատասխան մարմնի հետ հաղորդակցվելու համար: Խտրականությունը այն հիմքով, որ անձը ընտրել է հաղորդակցության այլ ձև, արգելվում է: Էլեկտրոնային հաղորդակցության խթանմանն ուղղված միջոցառումներն այս առումով խտրականություն չեն հանդիսանում:

Այս համատեքստում կարող ենք դիտարկել «Դատարանակազմության մասին» օրենքի 89-րդ հոդվածը, որի համաձայն, փաստաթղթերը կարող են ներկայացվել էլեկտրոնային եղանակով արդարադատության նախարարի որոշմամբ սահմանված դեպքերում: Օրենքի համաձայն՝ հաշվի առնելով առկա տեխնիկական հնարավորությունները և պարզ ու խնայողաբար կառավարման ու չարաշահումներից պաշտպանության սկզբունքները, նախարարը որոշում է այն փաստաթղթերը, ինչպես նաև այն դատական որոշումները, որոնք կարող են ներկայացվել էլեկտրոնային եղանակով:

" Գերմանիա

Գերմանիայի Դաշնային Հանրապետության, հանրային մարմինների կողմից էլեկտրոնային ծանուցումների իրականացմանը վերաբերող հարաբերությունները կարգավորվում են «Էլեկտրոնային կառավարումը խթանելու գործողությունների մասին»

օրենքով (E-Government-Gesetz), որի համաձայն 2-րդ հոդվածի 2-րդ մաս՝ «Յուրաքանչյուր դաշնային մարմին այնուհետև պարտավոր է բացել էլեկտրոնային մուտքը De-Mail համակարգի միջոցով՝ համաձայն De-Mail Act-ի, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան դաշնային մարմինը մուտք չունի վարչարարության համար նախատեսված SS կենտրոնական գործընթացին, որի միջոցով համապատասխան ծառայությունները տրամադրվում են դաշնային իշխանություններին:» (տե՛ս, E-Government-Gesetz):

Նշված համակարգը պաշտոնական հաղորդակցության համար Գերմանիայի կառավարության կողմից ճանաչված էլ. փոստի անվտանգ համակարգ է, որն օգտագործվում է օրինականորեն պարտադիր ծանուցումների համար, ինչպիսիք են օրինակ հարկային մարմնի որոշումները, կամ վարչական կարգադրությունները (De-Mail տեղեկատվական պորտալ): Ինչպես նաև, հարկային ծանուցումների համար գործում է կենտրոնացված առցանց հարթակ՝ Mein ELSTER, որը հատուկ օգտատերերի խմբերի համար է նախատեսված (Elster կենտրոնացված առցանց հարթակ):

Էլեկտրոնային փաստաթղթերի փոխանցումը թույլատրելի է, պայմանով, որ ստացողը դրա համար մուտք է սահմանում: Եթե իրավական դրույթները սահմանում են, որ փաստաթուղթը գրավոր է, այն կարող է փոխարինվել էլեկտրոնային ձևով, եթե այլ բան նախատեսված չէ իրավական դրույթով: Այս դեպքում էլեկտրոնային փաստաթուղթը պետք է տրամադրվի որակավորված էլեկտրոնային ստորագրությամբ՝ համաձայն Թվային ստորագրության մասին օրենքի (տե՛ս, Administrative Procedures act, § 3a):

Ավելին, Գերմանիայի «Մարդկանց վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման մասին» օրենքով նախատեսվում են դեպքեր, երբ իրավասու մարմինների կողմից էլեկտրոնային ծանուցումները պարտադիր կերպով իրականացվում են էլեկտրոնային հաշվետվությունների և տեղեկատվական համակարգով (տե՛ս, Infection Protection Act - IfSG, § 14):

Ինչպես վկայում է միջազգային փորձը, նշված երկրներում որոշ խումբ անձանց համար ծանուցումները իրականացվում են էլեկտրոնային եղանակով՝ որոշակի հարթակի միջոցով:

ՀՀ Սահմանադրական դատարանը իր որոշումներից մեկում անդրադարձել է էլեկտրոնային փոստին ուղարկված ծանուցմանը՝ նշելով, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ ծանուցմանը

վերաբերող իրավակարգավորումներից հետևում է, որ ծանուցման հանձնումը պետք է կատարվի այնպիսի եղանակով, որը թույլ կտա հաստատել հասցեատիրոջ կողմից ակտը ստանալու կամ օրենքով սահմանված դեպքերում պատշաճ ծանուցված լինելու փաստը, որը արդյունավետ կառուցակարգ է պատշաճ ծանուցման իրականացման համար, այսինքն՝ էական նշանակություն ունի ծանուցումը ստանալու հանգամանքը, այլ ոչ միայն այն ուղարկելու փաստի առկայությունը: Ընդ որում, հարկ վճարողը պետք է հնարավորություն ունենա «բացելու և ծանոթանալու» ծանուցման բովանդակությանը, և որևէ նշանակություն չունի, թե վերջինս օգտվե՞լ է այդ հնարավորությունից, թե ոչ: Այսինքն՝ պարտադիր ծանուցման ենթակա փաստաթղթերի՝ հարկ վճարողներին էլեկտրոնային եղանակով իրազեկումը կարող է հաստատված լինել միայն այն ժամանակ, երբ փաստաթուղթը ոչ միայն ուղարկվում է հարկ վճարողի կողմից հարկային մարմին ներկայացված էլեկտրոնային փոստի հասցեին, այլ նաև հասնում է այդ հասցեին (տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 2020 թվականի մայիսի 12-ի թիվ ՍԴՈ-1529 որոշումը):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ ՄԻԵԴ) նույնպես անդրադարձել է ծանուցման խնդրին: Մասնավորապես, գործերից մեկով դատարանը արձանագրել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի՝ արդար դատաքննության իրավունքի խախտում նշելով՝ «... Կողմերը պետք է կարողանան օգտվել հայց հարուցելու կամ բողոք ներկայացնելու իրավունքից այն պահից, երբ նրանք կարող են արդյունավետորեն տեղեկանալ իրենց վրա պարտականություն դնող կամ նրանց օրինական իրավունքները կամ շահերը խախտող դատական որոշումներ մասին: Հակառակ դեպքում դատարանները կարող են էապես կրճատել բողոք ներկայացնելու ժամանակը կամ նույնիսկ անհնարին դարձնել ցանկացած բողոք՝ հետաձգելով իրենց որոշումների հանձնումը: Դատական ակտի հանձնումը, որպես դատական մարմնի և կողմերի միջև կապի միջոց, կողմերին հայտնի է դարձնում դատական ակտը և դրա հիմքերը՝ այդպիսով նրանց հնարավորություն տալով բողոքարկել նպատակահարմարության դեպքում:» (տե՛ս *Escolano and Others v. Spain*, 2000, § 37): ՄԻԵԴ-ը արձանագրել է նաև, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը չի նախատեսում փաստաթղթերի հանձնման հատուկ ձև (տե՛ս *Bogonos v. Russia* (dec.), no. 68798/01, 5 February 2004): Այնուամենայնիվ, արդար դատավարության ընդհանուր հայեցակարգը, որն ընդգրկում է այն հիմնարար սկզբունքը, որ դատավարությունը պետք է լինի մրցակցային (տե՛ս *Ruiz- Mateos v. Spain*, 23 June 1993, § 63,

Series A no. 262) պահանջում է, որ քաղաքացիական դատավարության բոլոր կողմերը պետք է հնարավորություն ունենան իմանալու և մեկնաբանելու մյուս կողմի ներկայացրած դիտարկումները կամ ապացույցները: Նպատակ ունենալով ազդել դատարանի որոշման վրա (տե՛ս Lobo Machado v. Portugal, 20 February 1996, § 31, Reports of Judgments and Decisions 1996-I): Եթե դատավարական փաստաթղթերը, այդ թվում՝ դատական ծանուցագրերը, անձամբ չեն հանձնվում, ապա դիմողը կարող է զրկվել իրեն պաշտպանելու իրավունքից դատավարության ընթացքում (see Ozgur-Karaduman v. Germany (dec.), no. 4769/02, 26 June 2007):

Այսպիսով, ՄԻԵԴ-ի տեսանկյունից ծանուցումների հիմնական խնդիրը բացահայտված է դատական գործերում՝ դատարան դիմելու իրավունքի, ինչպես նաև դատարանի կողմից որոշակի իրավունքները սահմանափակելու (վճռելու) կոնտեքստում: ՄԻԵԴ-ը ծանուցման եղանակը թողնում է ՄԻԵԿ-ի անդամ պետության հայեցողությանը, սակայն արձանագրում է, որ անձի լաված լինելու և դատարան դիմելու իրավունքը չպետք է խաթարվի:

Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային ծանուցումները առաջարկվում է սահմանել որպես պարտադիր միջոց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից նույնականացման քարտ ունեցող ֆիզիկական անձանց, ինչպես նաև իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին ծանուցումը իրականացնելիս՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախ իրավաբանական անձիք և անհատ ձեռնարկատերերը հարկային մարմնի հետ հարաբերություններում արդեն ծանուցումները ստանում են Հարկային օրենսգրքով սահմանված հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի միջոցով, իսկ ֆիզիկական անձիք ունենալու են հասանելիություն իրենց պաշտոնական էլեկտրոնային փոստերին: Ընդառաջ գնալով ՀՀ Սահմանադրական դատարանի և ՄԻԵԴ-ի դիրքորոշումներին ծանուցման արդյունավետ միջոցների կիրառման համար՝ առաջարկվում է սահմանել, որ համակարգի կողմից հավաստում է ծանուցումը տեղադրելը, անձանց կողմից ֆիզիկական անձանց պաշտոնական էլեկտրոնային փոստ և անձնական էջ մուտք գործելը, և անձի կողմից ծանուցումը կարդալը:

Նախագծով առաջարկվում է նաև, որ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, ինչպես նաև նոտարները հրապարակային

ծանուցումներն ու հայտարարությունները տեղադրելու համար պարտավոր են վճարել նույն հիմունքներով, ինչպես մյուս սուբյեկտները:

3. Ակնկալվող արդյունքը.

Նախագծով ակնկալվում է հետևյալ արդյունքը.

1. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին, ինչպես ֆիզիկական անձանց ծանուցումները իրականացվելու են Հարկային օրենսգրքով սահմանված հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի անձնական էջի կամ ֆիզիկական անձանց պաշտոնական էլեկտրոնային փոստի միջոցով՝ ծանուցման գործընթացը դարձնելով դյուրին:
2. Անհատական և հրապարակային ծանուցումը տեղադրելը, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի անձնական էջ և պաշտոնական էլեկտրոնային փոստ մուտք գործելը և ծանուցումը կարդալը հավաստելու, ծանուցման հետ ցանկացած գործողություն կատարելու վերաբերյալ տեղեկությունները հաշվառելու (լրգավորման) և լրգերը պահպանելու կարգը սահմանում է Կառավարությունը:
3. Սահմանվելու է պատշաճ ծանուցման պահը՝ ֆիզիկական անձանց դեպքում՝ ֆիզիկական անձի կողմից պաշտոնական էլեկտրոնային փոստ մուտք գործելու պահը, իսկ իրավաբանական անձանց դեպքում՝ Հարկային օրենսգրքով սահմանված հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի անձնական էջ ծանուցումը տեղադրելուն օրվան հաջորդող երրորդ օրը:
4. Եթե բացակայում է անձանց կողմից կարդալու վերաբերյալ հավաստումը, ապա ֆիզիկական անձանց դեպքում իրականացվում է ծանուցում Հիբրիդային փոստի միջոցով հաշվառման հասցեով, որից հետո իրականացվում է հրապարակային ծանուցում և յոթերորդ օրը ֆիզիկական անձը համարվում է պատշաճ ծանուցված, իսկ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի դեպքում իրականացվում է հրապարակային ծանուցում և հինգերորդ օրը իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը համարվում է պատշաճ ծանուցված:

5. Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին հնարավորություն է տրվում իրականացնելու ծանուցում էլեկտրոնային եղանակով այլ իրավաբանական և ֆիզիկական անձանց ու անհատ ձեռնարկատերերին, եթե վերջիններս միացած են «Հանրային տեղեկությունների մասին» օրենքով սահմանված տվյալների փոխանակման շերտին:

6. Եթե առկա է ֆիզիկական անձի կողմից տրված համաձայնություն, ապա ծանուցումն իրականացվում է վերջինիս պաշտոնական էլեկտրոնային փոստին և անձը համարվում է պատշաճ ծանուցված ծանուցումը տեղադրելուց հետո երրորդ օրվանից՝ անկախ անձի կողմից պաշտոնական էլեկտրոնային փոստ մուտք գործելու հանգամանքից:

4. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.

Նախագիծը մշակվել է Արդարադատության նախարարության կողմից:

5. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026թթ. ծրագիր, ոլորտային և/կամ այլ ռազմավարություններ:

Նախագիծը բխում է Կառավարության 2022 թվականի հուլիսի 29-ի թիվ 1133-Լ որոշմամբ հավելված N 2-ով հաստատված ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրի 1-ին նպատակի 11-րդ կետից: